Հայաստանի Հանրապետություն
Республика Армения
Republic of Armenia
Արագածոտնի մարզի Բյուրական գյուղի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոց
ՊՈԱԿ
Марз Арагацотн, Основная школа им. Оганнеса Туманяна д. Бюракан ГНТО
Marz Aragatsotn v. Byurakan School named After Hovhannes Tumanyan SNCO

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագրի ամբողջական կամ միակողմանի լուծման մասին

«Հայկազունք» ՍՊԸ-ի
Տնօրեն Կ. Մացակյանին
ք. Երևան, Ծովակալ Իսակովի 48/17
ՀՎՀՀ՝ 0031526
Էլ.հասցե՝ haykazunq22@mail.ru

Հարգելի՛ պարոն Մացակյան

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԲՅՈՒՐԱԿԱՆԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Հայկազունք» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Վաճառող) 28.07.2023թ.-ին կնքված ՀՀԱՄ-ԲՅՈՒՐԱԿԱՆ-ՄԴ-ԳՀԱՊՁԲ-23/02-01 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև Պայմանագիր/ շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի Հավելված N1-ով սահմանված ապրանքները: Սակայն 24.11.2023թ.-ից խախտելով մատակարարման ժամկետները և պայմանագրով սահմանված դրույթները, չի պատասխանում հեռախոսազանգերին և չի մատակարարում պայմանագրով նախատեսված ապրանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «ԲՅՈՒՐԱԿԱՆԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ը հարկադրված է 2023թ.-ի դեկտեմբերի 01-ից

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամաբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 15163.1 (տասնհինգ հազար մեկ հարյուր վաթսուներեք ամբողջ մեկ տասնորդական) ՀՀ դրամի և 10108.7 (տասը հազար մեկ հարյուր ութ ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամի չափով վճարելու համար: Փոխանցումը պետք է կատարել Գնորդի բանկային հաշվին /ՀՀ ֆինանսների նախարարություն Հ/Հ900448000266/:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Հայկազունք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀՀ Արագածոտնի մարզի <<Բյուրականի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց>>
ՊՈԱԿ- տնօրեն՝

Լ.Մկրտչյան

01.12.2023թ.